2007 թ. Զեկույց

Տարի առ տարի «Ապագան բաց է» հկ-ն մեծ քայլ է անում իր հիմնական նպատակի իրականացմանն ընդառաջ՝ մանկատների և հատուկ տիպի դպրոցների երեխաներին զինել կրթությամբ, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն, արժանապատվությամբ հոգան իրենք իրենց մասին, երբ այլևս չեն գտնվի պետության հոգացության ներքո:

2007 թ. ընթացքում ծրագիրը ընդլայնել է ծրագրերը և կազմակերպել է նոր, շախմատի, ֆուտբոլի և բասկետբոլի պարապմունքներ:

Ոչ միայն երեխաներն են սովորում, այլ նաև կամավորները իրենց հերթին մասնակցել են վերապատրաստական դասընթացների, որոնք կազմակերպվել էին Բրիտանական խորհրդի աշխատակից և «Ապագան բաց է» հկ-ի կամավոր Լուսինե Ստեփանյանի կողմից:

2007 թ. ամռանը հկ-ն կարողացավ հատուկ տիպի դպրոցների տաս երեխաների, ովքեր ակտիվորեն մասնակցել էին դասընթացներին, ուղարկել Արզնիում ամառային ճամբար:

Տարվա հիմնական ձեռքբերումներից էր www.fio.am վեբկայքի անվճար տրամադրումը «Արմինկո» ընկերության կողմից, քանզի այս օրերին վեբկայքը հզոր գործիք է մեր ձայնը մեր հասարակությանն ու ամբողջ աշխարհին լսելի դարձնելու գործում:

Հկ-ին հնարավորություն ընձեռվեց իր աշխատանքը, դժվարություններն ու ձեռքբերումները ներկայացնել հանրությանը, երբ հկ-ի ներկայացուցիչները հրավիրվեցին Հանրային Հեռուստատեսություն մասնակցելու հեռուստածրագրի, որի ընթացքում, նրանք պատասխանեցին հեռուստադիտողին հուզող բոլոր հարցերին: Վերջում նրանք կոչ արեցին հանրությանը աջակցել մանկատների և հատուկ տիպի դպրոցների երեխաներին, որ նրանք դառնան ավելի կրթված:

Տարվա ընթացքում մեծ ջանքեր են արվել և շարունակաբար կփորձենք նաև միջազգային կազմակերպություններին ներգրավել մեր ծրագրերի ընդլայնման գործում:

Մեկ այլ ձեռքբերում, որով մենք բոլորս հպարտանում ենք ու արժևորում այն վստահությունն է, որ հկ-ն և իր կամավորները վաստակել են մանկատների, հատուկ դպրոցների տնօրինության, ուսուցչական կազմի և երեխաների շրջանակներում: 2007-2008 առաջին կիսամյակում կամավորները փաստեցին, որ երեխաների հետաքրքրվածությունը իրենց դասերի նկատմամբ մեծացել է:

Երեխաները հատկապես գնահատել են այն դասերը, որոնց ժամանակ իրենք յուրացրել են համաշխարհային բարոյական արժեքներ (օր՝ Մարտին Լյութեր Քինգի ելույթի հետ ծանոթացումը):

2007 թ. հկ-ն սկսեց նոր նախագիծ «Մեր բարեկամները», որի շրջանակներում տարբեր կրթական և ոչ կրթական հաստատությունների աշխատողներ և ուսանողներ այցեր կկազմակերպեն մանկատներ և հատուկ տիպի դպրոցներ՝ նախապես պատրաստելով զվարճալի հետաքրքիր ժամանցային փոքրիկ ծրագիր: Մեր առաջին պատվավոր բարեկամը դարձավ Երևանի Բրյուսովի անվ. Պետական Լեզվաբանական համալսարանը:

2007 թ. դեկտեմբերին գործող պարապմունքների՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, շախմատ, ֆուտբոլ, բասկետբոլ, հոգևոր և համակարգչային, պատասխանատուները ամփոփեցին իրենց դասերը՝ կազմակերպելով հետաքրքիր բաց դասեր այն հաստատամտությամբ, որ նոր կիսամյակը կսկսեն նոր խանդավառությամբ, նվիրումով, հետաքրքիր գաղափարներով և ծրագրերով: